Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

442

Ltn
139

1999

ՄՐԱՄՈՒՆՋՔ



Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ
ԱՐԾԻՈՅՆ

ԻՎԱՆ ԻՎԱՐԱԳ

1873—Ո·ՅԻՒ

1224

ՆԱԽԵՐԳԱՆ

Ձօր եմ յարգօր իմ բանայի շայս մրմունջ,
Մ՝ամեյ 'ի բնէ 'ի լոյս ածե՛մ գեղափունջ,
Ո՛վ բնէ լեռի յօղէլ հայլան արփաատայ,
Եւ յայն աչայ, որ ընբնեաններ շայս ճերբնուած,
Ձէ որ չձիւէ շվէրս ընհերին արփաատել,
Ո՛չ հեւպամուպ եւ տարմանին 'ի բուժել։

ՏԻԳՐԱՆ ԱՄԻՐՃԱՆԵԱՆ։

139-60

Հբ. 145

ԵԳ ․ԵՐԵՐԳՈՒՔ

Ուաուչէ․
Աշանէրփ․

Ըյգիին մէջ սպանուած Փէրճիւլեան Մ՝իրզայի չորս աղջկունք․ քաղաքամէջը ցրուել ատեն բռնաբարուած ութամեայ դատրին մը։

Տեսարանն է 'ի ստորև Ղուլ ամեան տղրուշը։

Ուսուցիչը աթոռի մը վրայ լուռ եւ տխուր՝ ձեռքը ճակտին դրած կուլայ եւ աշակերտաք կը մօտենան ողորմագին եւ կը հարցունեն․ ինչո՞ւ կուլաս, հա՛յր։

Կուլամ ես և արտասուք խորշոմ այտերս ակօսներէն
Վէտ 'ի վէտ Թո՛ղ ծաւալին 'ի ցաւ ծնած կուրծքիս վերայ,
Կուլամ ես եւ արտասուք յուզուած խորին անդունդներէ
Թո՛ղ հոսին հեղեղածուփ այս ցամաքած երկրի վերայ։
Բայց իմ աչք չեն բաւական, ո՛ տայր ինձ փոխ հեղեղատներ
Որ պասքած երկրիս ծարաւը թէ կարելի էր անցունել։
Ա՛հ, ո՞ւր է իմ սեւազգեստ, փոշւով պատած փափուկ քնար,

Լուռ է նա շատ ժամանակ, մահ է հոգւոյս այդ
լռութիւնը,
Քնա՛ր ա՜հ... կարօտամաշ թերթից ծաղկանց
գեղածիծաղ.
Որ թելերն իւր ժանգոտած կրկին ուղղեմ յողբ
եւ ի լալ:
Այլ իմ լաց չէ բաւական, ո՜ տայր ինձ փոխ հեղե-
ղատներ
Որ պասքած երկրիս ծարաւը թէ կարելի էր անցու-
նել:
Օ՛ն բացուի սեւ վարագոյր ողբոց պատկերք գան
յերեւան:

(Վարագոյրը կը բացուի եւ Մ`իրզայի չորս աղջիկունք ցիրուցան մազերով կը տեսնուին թատերաբեմին վրայ, որ կուլան եւ երբեմն երբեմն ողորմագին հայեցուածք կը ձգեն յերկինս):

Հոսեցէք թշուառ աչկունք, յաղէգալար այս տե-
սարան.
—Արիւնոտ փուշ պսակ քեզ, դա՛ր շպարուած
բոցի նման—,
Հոսեցէք, անբաղդ աչկունք, սրտաճմլիկ յայս
տեսարան:
Բայց իմ աչք չեն բաւական այս թուխ տեսիլն
արտասուելու,
Մասիսի երկնից ամպեր, ողողեցէք այս տեսարան:

2

Կուսանք համեստ քան զմանուշակ,

Վճիտ քան զ'պարզ աւուր վտակ,
Պարկեշտութեան պերճ օրինակ,
Իբր զլուսնի վեհ բոլորակ,
Քորք իմ ազնիւ, քորք սիրական,
Աստղունք յուսոյ տան Թորգոմեան,
Ինչո՞ւ մռացած դուք պատկառանք,
Ձեր միայնակ զարդն ու պարծանք,
Անհետս վարսեր ձեր յուսերուն,
Ի խաղ թողած ցուրտ հովերուն,
Դողդոջ ձեռօք բազկատարած,
Լայք եւ ողորմ հայիք յԱստուած:

3

(Կոստանդ Նարգաս Երգելով)

1. Ախպէրի՛կ ախպէրի՛կ, մի՛ լար մեզ համար,
Հերիք է մեր արտասունք թէ սրտեր չեն քար,
Պլպիւլն իւր վարդ կուլայ, տատրակն իւր ձագեր,
Սրտիդ մեռնիմ Ա՛ստուած, է՛ս ի՛նչ սեւ գրեր:
2. Ա՛հ թո՛ղ պիւլպիւլ էլնենք, կանցնէր ցուրտ
ձմրան,
Վարդերնիս կը բացուէր նոր հարսի նման,
Ապա թէ հաւք էլնենք, թռնինք հետ էրամին,
Շուտով դարման կէլնէր մեր բարկ կրակին:
3. Դառնիկ չարչարանքով այգի փորեցինք,
Այգեկութին աւուր յուսով մնացինք,
Խաղողն արիւն դարձաւ, այգին ծովացաւ,
Տնտեղ զարկաւ էկաւ, մեր տուն աւրեցաւ:

4 · Ա՛հ, մեր տուն աւրեցաւ, մեր մէջք կոտրեցաւ
Մեր հօր կանաչ արեւ հողով ծածկեցաւ,
Ա՜խ, հէրի՛կ հէրի՛կ, անունդ էր Միրզա,
Արեան մէջ թաթխեցար եղար նորընծայ։
1 · Զորս հատ իբրեւ կապած աղջիկ այալներ,
Թողիր վեր պաղ թօրվան անտէր տնաւեր,
Եւ ո՞վ պիտի բերի վարժատան կտեր,
Որ ուտեն կշտանան քո ձէթկիկ ձա՛գեր։
2 · Որ ուտեն ծրարուին, չինեն դունէ դուռ,
Վա՛հ, մուրանք է՞լ պիտի, վա՜յ գայ էն աւուր,
Աստուած մեզ մի՛ զրկեր քո սբ հրեշտակէն,
Որ չէլնի ահ սրտէն, ամօթն իրխէն։
3 · Ա՛հ, տաճիկ տաճիկ, դահիճ մեղաւոր,
Ինչի՞ մեզ արեցիր ձեռ ծոց սգաւոր,
Տիւք խնայել գիտէք ձագուոր հաւքերուն,
Չխնայեցիր մեր հօր ու մարդ էր անուն։
4 · Սեւ կաւով ծիփեցիր մեր դուռն ու էրտիք,
Եւ կտրաւ մեր տընէն ձեզ մեծ աւետիք,
Սեւատով նիրկեցիր մեր զատկի հաւձիւն,
Սեւին իբրեւ չկայ չում Աստծու տուն։
1 · Եւ ո՞վ կը հարցունի խեղճ որբ ու այրին,
Եւ չի բըխեյ արիւն որ գան ժողվուին,
Էկան կրկչացին անծեղի նման,
Վէրցաւ դիակ տնէն թողի՛ն ցրուեցան։
2 · Ա՛հ ախպէր, ճան ախպէր տիւ վարժապետ ես
Աստըծու ճար ճա՛մպա՛խ շատ աղէկ գիտես,
Թէ կը սիրես քեզ արեւ էն սբ գերեզման,
Քեյ խնդիրք մի կանենք, չանես մտահան։

3 · Մեր թուխ թուխ մազերէն փնջիկ կտրեցինք,
Մեր խեղճ խէրկան արուն վէրէն ցանեցինք,
Տրինք մէջ սեւ թղթի ծրար կապեցինք,
Դառնիկ արտսունքով նստա՛նք գէօվացինք։
4 · Կուտանք քեյ էն ծրար լալով ու սգով,
Թէ չոր է քեզ թա՛նա՛ք, կ'թրջենք արտսունքով,
Որ թուղթ մէլ տիւ գըրես մէջ մեր ամանաթ։
Հաւքու թեվով տարուի ստամպօլ քեաղա՛ք,

(Զորսը միաբերան)

Ստանպօլ թա՛ղ տանին էն Ս · Հայրիկին,
Աստուած գըլէօխ պահի մեր Հայոց ազգին,
Ա՛հ, որ մէկ ճար անի մեր սեւ սեւ բա՛խտին,
Չըթօղնի մեր ձէն հասնի աշեղ ատենին։

(Կուսանք կերթան և վարագոյրը կը գոցուի)

4

(Ոստայչէն)

Հարուա՛ծ անգութ որ այս քընքուշ ծաղիկները
Թողիր հողմոց եւ խորշակին խաղալիկ,
Ա՜ն ինչ 'ի լոյս բացին թշուառ աչուները
Հասաւ գիշեր եւ արհաւիրք եւ մրրիկ,
Բայց իցի՛ւ թէ այս միայն էր տեսարան։

(Ութամեայ կոյսը դողալով բեմին վրայ կուգայ)

Ո՜հ ինչ տեսնեմ․ . . կոյս մի մատաղ յերերման։

5

Ջերթ որսորդին ձեռքէն փախչող այծեմնիկ
Սարսուռ տիրէ գողտրիկ մարմնոյդ, ո՛ դստրիկ.
Եւ երբ աշնան սըգազգեցիկ տերեւներ
Ո՛հ դեղնած է գեղեցկագիր քո պատկեր։
Ինչո՞ւ, ո՛ կոյս, զի չես դաշտին դու եղնիկ,
Եւ այդ ամաց այդքան թախիծ չէ բնիկ.
Կենաց գարուն թէ չէ փթթեր քո այտեր,
Այլ Երբ ո՛հ Երբ պիտի բանաս ծաղիկներ։

6

(Կոյսն)

Ա՛հ ինչ անեմ, քեզ ինչ ասեմ ախպերիկ,
Սեւն առերի քեզ խեղճ քիւրոջ արեւիկ.
Սարեր, ձորեր իմ ցաւ լսան զարմացան,
Ու հրիշտակներ երկրէս երկինք ժողվեցան.
Վո՜վ էր տխեյ օր ցերէկով արիւով,
Քեաղա՛քի մէջ բազմամարդ տեղ տպահով,
Մազ մուրուսով թըւրխ կալմով մէկ տաճիկ,
Լրբի բա՛նայ նոր նոր պտկած սուրբ ծաղիկ։

7

(Ռուսուհին)

Ոճի՛ր անլուր, դժոխք սոսկաց, մեռեալք գլուխ շարժեցին.
Կոյս ութամեայ բռնաբարուած . . . ո՛վ ինչ է զերն աչացին,

Ո՛, որ դարուց քրքրէք խորեր, ուշիմք ելէք, 'ի խնդիր,
Թէ միջին դար տեսա՞ւ երբէք այս կերպ դըժնեայ մի ոճիր։
Բայց մինչ որ դուք տայք եղկելւոյս պատասխան
Ես պիտի լամ ու մրմնջեմ այս խեղճ բան,
Աւա՜ղ աւա՜ղ անցեր է կեանք մեր երկրին,
Թէ կայ մեզ կեանք, կայ եւ խելար ոչխարին։
Բաբէ՛ թէ խիղճ, թէ պատկառանք եւ թէ օրէնք լռեցին,
Գէթ բնուն իւր ձայն ազդէր այդ լիրբ մարդուականջին,
Ի վրէ՛ժ 'ի վրէ՛ժ ո՛ կորիճներ, 'ի վրէժ փութանք սաստկագին,
Այս մեր քոյրն է մեր արիւն է, որ ո՛հ այսպէս լլկեցին։
Բայց մինչ որ դուք ձեր խոր քունէն արթննաք
Եւ մարդն ի՛նչ է եւ կեանքն ի՛նչ է ճանչնաք,
Ես պիտի լամ ու մրմնջեմ դառնագին,
Աւա՜ղ աւա՜ղ անցեր է կեանք մեր երկրին։
Ո՛վ ազգատին քրտինքներով գոռոզացած ճակատներ,
Ջո՛ր ապողոն կարծէ անձին այս ժողովուրդ տընաւեր,
Դարման տարէք անտէր այդւոյս, որուն պըտղով լխանաք,
Մօտ է աւերն թէ դեռ չ՚զգաք, Թուղբին յուսով մի՛ մնաք։

Բայց մինչ ձեր գլուխ օդին բարձրէն զիջանի ,
Հայիլ իւր ոտք եւ այս այգւոյն ցաւալի ,
Ես պիտի լամ ու մրմնջեմ դառնագին ,
Աւա՜ղ աւա՜ղ անցեր է կեանք մեր երկրին ։
Ո՞ր ես Ա՜ծ իսրայէլի , գէթ դու 'ի վրէժ ել ահեղ
Որ ժողովուրդ քո տառապեալ զքեզ պաշտէ սիրալեղ ,
Ո՛հ առ վշտին նա քրթմնջէ իբրեւ մանուկ ահ ընդ ահ ,
Տէ՛ր , ես միա՞ն պատժոյ արժան , չկայ այլ ոք քան զիս ճահ ։
Բայց մինչ որ քո հանբերուն լեցուի չափ ,
Եւ դաս հրով դատել զերկիր ապերախտ ,
Ես պիտի լամ ու մրմնջեմ դառնագին ,
Աւա՜ղ աւա՜ղ անցեր է կեանք մեր երկրին ։

8

(Ո-սու-յէն աս- աշխէրտան)

Լուռ եւ տխուր զինչ աւերակ հոյակապ ,
Եւ կամ զ'պանդուխտ բաղդակորոյս եւ համբակ ,
Որդեակք սիրուն , աչք ձեր 'ի վեր համբարձէք ,
Եւ խօսեսցի առ իս ձեր շուրթն անուշակ ,
Հայաստանի վիրաց անթիւ է պատկեր ,
Բանա՞մ այլեւս թէ քօղարկեմ այդ սեւ դեր ։

9

(Աշխէրտ՝)

Եւ ո՞վ է այն անգութ որդին ո՛ Հայրիկ ,

Որ մեր վիրաց չ'զգայ չիլայ եւ սրտիկ ,
Թէ մեր արցունք իւր ցաւերուն չեն ճարակ ,
Այլ ինչ ունիմք , ո՜հ դեռ տկար պատանեակ ։
Մի՛ խնայեր բաց քո մատաղ որդեկաց ,
Թո՛ղ որ այժմէն վարժին 'ի գութ եւ 'ի լաց ,
Թո՛ղ որ տեսնեն ու մրմնջեն դառնագին ,
Աւա՜ղ աւա՜ղ անցեր է կեանք մեր երկրին ։

10

(Ռ-սու-յէն)

Յոյս իմ , լոյս իմ , Նեկտար կենացս դառնորակ ,
Լացէք այո՛ , լացէք ազնի՛ւ իմ որդեակք ,
Ոչ ցօղ զուարթ այնքան երկիր պարարէ ,
Որքան արտասր բղխեալ սիրոյ աղբերէ ։
Սէր գթութի՛ւն , ո՛վ ինչ ուսումն մեծասքանչ ,
Զայս թէ սորվիք , յայնժամ մեռնիմ գերապանծ ,
Աչք որ արտասր կարեկցութեան չի բղխեր ,
Ապառաժէ , որ յաւիտեան չի ծաղկեր ։
Այլ նոր տեսիլ մի թախանձէք զիս բանալ ,
Ուր այր անձամբ բանայ իւր սիրտ նեռահար ,
Զ.ի դուք մատայ , բա՜ւ այդքան սուգ արտասուք
Եւ ես տկար , ո՜հ ալ կարող չեմ տոկալ ։

11

Գէթ համառօտ ասա՛ մեզ հայր մի քանին ,
Զ.ի մեր արտասր ոչ բաւական հոսեցին ։

12

ںստեր 'ի դաշտ կին ժրաջան մշակին,
ںստեր, երդեր կթոցն 'ի ձեռն սրտագին,
Գառնուկք անմեղ իւր բոլորտիք շար առած,
Կայր սպասու իւր սիրեցեալ հօտակին։
Ահա հասնի (ո՛ սոսկալի գուժաբեր)
Ջարկին ոչխարք եւ ցրուեցան հովիւներ,
Նթոցն ինկաւ եւ կին երկիր փաքուեցաւ
Եւ գառնուկներ մայեն անտէր եւ ան մայր։
Ելեր 'ի դուրս ընդ երեկոյս ձեռն 'ի ծոց,
Հարսն նորապսակ կայր անձկալի փեսային,
Ահա տեսնէ, զի՞նչ—արիւնոտ մի կրկնոց,
Ցցուին վարսեր, սարսուռ պատէ եւ մարմին,
Կամի դառնալ այլ սիրտն մնայ 'ի վարան,
Եւ հարցանէ սրտատրոփ կիսաձայն,
Որո՞ւ է այս—քո սիրեցեալ փեսային—
Լացէք մանկունք հարսն մը ալ ինկաւ 'ի գետին։

13

(Աղաղերգ*)

Ո՛վ սոսկալի աղէտիցս։

14

Գիշեր է դեռ, երէցն 'ի քուն կայ լռին,
Եւ արուսեակ դեռ չէ յաղթեր սառուերին,
Սին ոք փուքայ, շրթունք զօրհներգ մրմնջեն
Եւ արտասուք ընդ յօղս յերկիր իջանեն,

Գնայ միակ այլ զինչ զինեալ ախոյեան
Եւ զի՞նչ իւր զէն, հաւատք մի ջերմ անսասան,
Գնայ խնդրել զԵհովային օրհնեալ տուն,
Տապա՛ն անքոյթ, ոյց հալածէ մարդկութիւն,
Եւ հասանէ եւ իւր շրթունք սիրաքաց
Այն ինչ մատչին Ցեռան 'ի սեմոց 'ի տուրբ խաչ,
Իսկոյն խոսէ եւ ձայն բառնայ լալագին,
«Ո՛ տէր, զի՞նչ այս, շրթունքս 'ի ժահ համակին»։
—Մի՛ լար ո՛ կին, թէ լաս գէթ մի՛ անվատակ,
Ե՛լ ել սրբէ աիրոջ դրան վեհ ճակատ,
Որ չիգայ լոյս լուսաւորեալ դարուս մէջ,
Ջ'տուն հօր լուսոյ տեսնել այդպէս նշաւակ։
Մի՛ լար ո՛ կին, թէ լաս, գէթ մի՛ աղաղակ,
Թո՛ղ որ երէց ննջէ իւր քուն քաղցրորակ,
Փափուկ է նա, փափուկ դարուս այս ծնունդ,
Չէ նա ղեւոնդ, խուժ միդարու խօլ սերունդ։
Ծածկէ ո՛ կին, մի՛ խառվեր ժողովուրդ,
Շատ է իւր վէրք, մի՛ յաւելուր եւ այդ սուգ,
Ի սէր դորա կորոյս նա փառք, անթիւ քաջ,
Ո՛հ թո՛ղ չ'տեսնէ իւր միակ փառքն նախատուած։
Լռէ՛ ո՛ կին, մեծ է դարուս նպատակ,
Մեծ քան զկատուին լռիկ որսոյն իւր 'ի ծակ,
Ընչին մկան չէ նմա փոյթ ողորմ ձայն,
Ոչինչ հոգայ բայց իւր անյագ որովայն։

15

(Աղաղերգ*)

Աւաղ առին մեր մարմնոյ կեանք,
Կամին առնել եւ հոգւոյ կեանք։

16

Արդ ի՛նչ անենք, սիրուն մանկունք ո՞ւր գնանք
Որո՞ւ դիմենք, մեր ձայն առ ո՞վ ամբառնանք,
Պատիւ կոխան, կրօնք կոխան, հայն՝ յարեան,
Աւարն անթիւ, ամէն տեղ ողբ ու կական։
Լռե՞նք ուրեմն կամ լա՞նք իբրեւ յուսահատ,
Ո՛հ եւ այդ իսկ մեր կորստեան է թակարդ,
Ազգ՝ որ չունի բայց թէ միայն արտասուք,
Ուշ կամ կանուխ, հասնի նորա մահուան սուգ։
Կրթի՛նք, կրթե՛նք, շարժի՛նք, շարժենք անձանձիր,
Ձէ ներելի վայրկեան մը սահել 'ի նանիր,
Լանք ալ այո՛ այլ ոչ 'ի ձայն կանացի,
Ա՞ր ամեն գործ պէտք է լինի առնացի։
Պարզ 'ի մեր մէջ եւ խորագէտ առ օտար,
Ձիյնանք 'ի կարթ զերթ անասնիկ ապիկար,
Եւ այսպիսեօք ցոյց տանք բոլոր աշխարհի,
Հայն ալ մարդ է ունի իւր բան եւ հանճար։

(Ա՞ին յաշակերտաց)

Այո՛ գնանք, գնանք եղբարք ուսանել,
Թէ ի՞նչ է կեանք եւ ինչ պէտք է մեզ անել։

Տ. Ամիրճանեան։

ՎԵՐՋ

1224.

«Ազգային գրադարան»
NL0247768